

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՅԱԿՈԲ Դ. ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ԵՒ ՏԱՃԿԱՀԱՅ ՆՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

1662 թուին Լեհաստանի հայերին ուղղած մի կոնդակի մէջ Յակոբ Զուղայեցին, ժամանակի կաթողիկոսը, գրում է. «Եւ մա-
նաւանդ քան զնուիրակութիւնն կրկնակի օգնութիւն իմն կու
խնդրեմ ի ձէնջ. քանզի յոյժ բազմացեալ է պարտքն ի վերայ
սուրբ տանս, այս քան՝ զի պարանոցաթաղ կեամք ի մէջ պար-
տուցն . . . Եւ դարձեալ կրկին թախանձանօք խնդրեմ . . . զի փու-
թանակի գործառնութիւն դորին,—խօսքը նուիրակի մասին է,—
օգնական և թիւադիր լինիջիք, զի մի՛ յետասցի, և տոկոսն ի վերայ
պարտուցն բարդեսցի, զի կամքն մեր այս էր, զի բոլոր տունս
Յունաց ի դա էաք յանձնեալ, հանդերձ երեք վարդապետօք, զի
նուիրակեսցեն. այլ վասն պարտուցն որ կարի նեղացուցին զմեզ,
երկու երեք նուիրակ այլ առաքեցաք յամենայն կողմանս, զի
մինչև Յայտնութիւն աւարտեսցեն . . . Այլ և խնդրեմ զի ամենայն
ինչ լիապէս հոգասջիք, թէ Հոգեբաժին, թէ Քառասնից, թէ յի-
շատակ, լիապէս ընդ իւրաքանչիւր պարտիք հատուցանել. զի
սրտին սէրն ի ձեռացն տուրքն կու երևի*): Այս տողերը բաւա-
կանաչափ բնորոշում են այն դերը, որ պէտք է կատարէր նուի-
րակութիւնը ժէ դարի էջմիածնական ֆինանսների կանոնաւոր
շրջանառութեան համար: «Ի բնէ է ամենայն ազգ Հայոց՝ ուր և
իցէ,—պարսից շահին ուղղած այս խօսքերը ժամանակակիցներէց
մէկը դնում է նոյն կաթողիկոսի բերանում,—թէ յաշխարհին Օս-
մանցւոց, թէ ի Ֆռանգաց, թէ Հնդկաց, թէ Մոսկովաց, և ուր և
գտանի յազգէն Հայոց, ամենեքեան հնազանդին էջմիածնի՝ որ է
ի ներքոյ տէրութեան քում. և ըստ օրինաց մերոց հարկս տան
բնակչաց էջմիածնին, և նոքա դարձունական հարկն տան»**):

*) Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, եր. 238:

**) Զաքարիա սարկաւազ, «Պատմագրութիւն», Վրդշատ. 1870, Բ. Եր. 84: Այս շրջանի պարսկահայ հարկերի ու հարկահանութեան եղանակի վրայ կանգ ենք առել մեր «Israel Ory und die armenische Befreiungs-
idee» վերնագրով լոյս տեսած ուսումնասիրութեան մէջ, (եր. 59 եւ շար.) :
Հմմ. նաեւ մեր յօդուածը «Արարատի» սոյն տարուայ յունուարի համա-
րում, եր. 62 եւ շար:

Նեղուած այն պարտքերից ու հարկերից, որ ծանրանում էին էջմիածնի վրայ, Յակոբ Զուղայեցին առանձին եռանդ է գործ դնում կարգի բերելու նրա խախուտ տնտեսութիւնը և այդ նպատակով սկսում է լայն չափերով շահագործել այն եկամտային աղբիւրները, որ սկիզբ էին առնում յատկապէս տաճկահայ նուիրակութեան իրաւունքից: Ժամանակակից մի վկայութեամբ նրա օրօք նուիրակների իւրաքանչիւր շրջագայութիւնից յետոյ Օսմանեան պետութիւնից Պարսկաստան էր մտնում աւելի քան 10,00 դահեկան*): Եկեղեցական այս հասոյթները առևտրական հիմունքներով էին ստացւում. հաւատացեալների «նուիրաբերութիւնը» հատուցում է գտնում նուիրակների վայելած մեռնաբաշխութեան իրաւունքի մէջ**): Օգտուելով այդ մենաշնորհից ու պատրուակ բերելով էջմիածնի վրայ ծանրացող պարտքերը, նուիրակները բռնի միջոցներով սկսում են խիստ բարձրացնել միւռնի գինը. նրանք նոյն իսկ իրաւունք են համարում ձեռնամուխ լինել տաճկահայ վանական ու եկեղեցական կալուածներին ու շարժական հարստութեանը. «ուտեն և ըմպեն և կողոպտեալ զնոսա առաքեն յաշխարհն Պարսից». գանձած գումարների մի խոշոր մասը նուիրակները յաճախ վատնում են անձնական նպատակների համար. ժողովրդի վրայ պարտականութիւն է ընկնում հոգալ նրանց ու նրանց ուղեկիցների ու ձիերի բոլոր պէտքերը. սակայն նրանք երբեմն աւելի շատ էին պահանջում, քան հարկաւոր էր նրանց բնական պէտքերի բաւարարման համար. «անիրաւութեամբ յափշտակին զգառս և զոշխարս, իւղ և մեղր, և զայլ ամենայն ուտելիս և ըմպելիս». կղերի ու ժողովրդի բողոքները ապարդիւն էին անցնում. շատերին սպասում էր պատիժ ու բանադրանք միայն***):

Այսպիսի պարագաներում է, որ տաճկահայոց շրջանում հետզհետէ հասունանում ու արձագանք է գտնում էջմիածնի գերիշ-

*) Տէր Յովհաննէսեան, Աստ. եպ. «Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի». Երուսաղ. 1890, Ա. 584.

**) «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռվմայ», հրտ. Կ. Եգեանի. Պետերբ. 1884, եր. 6, 44, 144 եւ շար. 146 եւ շար. «Շողակած», Ա. եր. 57 եւ 59, յօդ. Մ. Վ. Նշանեանի, «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեանի. յետին ժամանակների հմր. հմմ. Սիմէօն կած. «Չամբո», Վ. զրշպ. 1875, եր. 44 եւ շար., 78 եւ շար. 85. «Դիւան հայոց պատմութեան», Գ. 797 եւ շար. 807 եւ շար. Մ. Դ. Թաղիդեանց, «Ճանապարհորդութիւն ի Հայս», Կարկած, 1847, հ. 1. եր. 240 եւ շար.:

***) Տէր Յովհաննէսեան. անդ, Ա. եր. 554 եւ շար., 584 եւ շար. Չամբան. «Պատմութիւն Հայոց», Գ. 692 եւ շար.

խանութիւնը սահմանափակելու կամ նրանից միանգամայն ազատագրուելու միտքը*); իրանց անջատողական ձգտումներն իրագործելու նպատակով՝ հայերը դիմում էին տաճիկ կառավարութեան աջակցութեանը. կառավարութիւնը պետական շահերի հետեողութեամբ միայն խրախուսել կարող էր այդ շարժումը. նուիրակները, այսպէս էին տրամաբանում սրանց խելահաս հակառակորդները, մեծ քանակութեամբ կանխիկ դրամ են հանում երկրից ու այդպիսով արգելք լինում հայերին կանոնաւոր կերպով վճարելու տէրունական խարաջը. էջմիածնի միջոցով Թիւրքիայի հայերը փաստօրէն պարսից հարկատուների պաշտօն են կատարում. օսմանեան դրամով պարսիկները զինւում են Թիւրքերի դէմ**); Կասկածելի թուացող նուիրակներին Թիւրքերը խիստ հարցաքննութեան են ենթարկում. սրանք էլ աշխատում էին հաւատացնել, որ իրանք՝ հեռու քաղաքական դիտաւորութիւններից՝ սոսկ առևտրականի պաշտօն ունին. «Ես, ասում է նուիրակներից մէկը, իւղավաճառ եմ, ո՞վ որ գնէ յինէն իւղ՝ դրամով գնէ, և ո՞վ որ գնէ, ոչ տայ դրամ»***); Նման սրտաբացութիւնը սակայն միշտ էլ չէր փրկում նուիրակներին. դեռ ևս ժՁ դարում են յիշում սրանց դէմ ուղղուած հալածանքի ծանր դէպքեր. «հայոց նոր վկաների» վարքագրութիւնը զերծ չէ նմանօրինակ նահատակների կասկածելի սխրագործութիւններից†); Ժէ դարի կիսերին հայերը իրանք են բազմիցս դիմում սուլթանին, խնդրելով դուրս քշել նուիրակներին օսմանեան պետութեան սահմաններից. Մեհէմէտ Դ. անսալով այդ դիմումներին՝ հրաման է արձակում ամենուրեք՝ վերջ տալ նուիրակների անկարգութիւններին և արգելել մեռոնի բաշխումը նրանց, որոնք չեն ներկայացնի դրա համար յատուկ կայսերական թուղթ†): Բայց այս միջոցն էլ չէ օգնում ըստ երևոյթին. մի քանի տարի յետոյ հայերը խնդրում են կարգա-

*) Առաքել վրդ Գաւրիթեցի, «Պատմութիւն», Գ. տպ. Վրդպտ. 1896, եր. 242 եւ շար. Զաքարիա սարկ. Բ. եր. 27 եւ շար. 72 եւ շար. «Թուղթ Սիմէօն կաթ. առ Փիլիպպոս ս. էջմ. կաթ.» հրտ. Յուսիկ արքեպ. Վրդպտ. 1904, եր. 78 եւ շար. «Շողակաթ». Ա. 61, «Զամբռ», եր. 93 եւ շար.

**) Chardin «Voyages en Perse, et autres lieux de l'Orient» etc. ed. par L. Langlès. Paris 1811, 6. II, եր. 245, Զաքարիա, անդ. Բ. 27. Տէր Յովհաննէսեան անդ, 565 եւ 581 շար.

***) Զաքարիա, անդ, 28.

†) Տե՛ս Մանանդեան եւ Աճառեան «Հայոց նոր վկաներ». Վրդպ. 1902, (ժողովրդ. հրտ.), Բ. 47 եւ շար. Ալիշան, «Վամենից» եր. 46.

†) Տէր Յովհաննէսեան, անդ, եր. 555.

դրել՝ «զի... միայն հաճութեամբ ազգին բերցեն զՄիւսոնն և զհաստեսցեն ձեռամբ վաճառապետին, որպէս այլ կարասիք, որք մտանեն ի սահմանէն պարսից, և ըստ այնմ բաժանեսցեն զայն, զի մի լիցի բռնութիւն»^{*)}։

Ժողովրդի ու կառավարութեան այս ընթացքը ճարպկօրէն օգտագործում է յատկապէս երուսաղէմի պատրիարքը՝ Եղիազար Այնթապցին։ Նշանակալից է, որ նա դեռ ևս 1661 թուին էջմիածին անունով մի եկեղեցի է հիմնում Երուսաղէմում ու այս խորհրդանշանով կարծես իւր հեռաւոր նպատակները դրսևորում։ Կաշառքի և ընծայաբերութիւնների օժանդակութեամբ նա առաջ է մղում հետզհետէ էջմիածնից անջատուելու ծրագիրը ու 1664 թուին յատուկ հրովարտակով հաստատում տաճկահայոց անկախ և ընդհանրական կաթողիկոսի նորահնար պաշտօնի մէջ։ Երուսաղէմի վրայ պիտի ծանրանար տարեկան 15000 ստակ պետական տուրք։ Դրա փոխարէն Եղիազարը այժմ կարող էր վերապահել իրան նաև մեռն օրհնելու ու ձրիաբար բաշխելու իշխանութիւն։ մեծ եպարքոսը կուսակալների միջոցով արգելում է էջմիածնի նուիրակներին մուտք գործել Տաճկաստան^{**)}։

Եղիազար Այնթապցու այս ձեռնարկը մեծ հարուած էր հասցնում էջմիածնի իրաւասութեանն ու նիւթական բարեկեցութեանը. և որովհետև հէնց նուիրակների միջոցով էին ստացւում այն կանխիկ դրամները, որ պէտք է անցնէին պարսից պարտատէրերի ու հարկահանների ձեռքը, նուիրակութեան խնդիրը սպառնում էր բարդանալ քաղաքական և դատաստանական ծանր հետևանքներով։ Այս գիտակցութիւնը հարկադրում է էջմիածնի սրբագործուած իրաւունքների պաշտպաններին միջոցներ ձեռնարկել չքացնելու տաճկահայ կաթողիկոսութեան ուրուականը։ Այդ իմաստով էլ Բ. Դուան հետ բանակցութիւններ են սկսում նախ Մարտիրոս Կաֆացին և ապա էջմիածնի կաթողիկոսը՝ Յակոբ Զուղայեցին։

Բանակցութիւնները տասն և հինգ տարուայ տևողութիւն են ունենում^{***)}։ Թիւրքիայի և յատկապէս Կ. Պօլսի հայ հասարակութիւնը պառակտուել էր երկու զօրեղ կուսակցութիւնների. «Կէսքի կողմն էջմիածնի էին, մանաւանդ նոքա՝ որք եկեալ էին ի քա-

*) Անդ, եր. 589։

**) Անդ, 563 շար. Զամեան, անդ, Գ. 697, 699 եւ շար. Զարիա, անդ, Բ. 72. «Զամբու» եր. 259։

***) Զամեան, անդ, հ. Գ. եր. 697—718. Զամեանը իւր աշխատութեան այս մասերը կազմելիս օգտուել է ըստ երեւոյթին Նրեմիա Չէլէպի Քեօմիրճեանի անտիպ ժամանակագրութիւնից, Զամեանից աւելի միջոտ տեղեկութիւններ է տալիս այդ բանակցութիւնների մասին Տէր-Յովհաննէսեան, անդ. եր. 563 եւ շար. վերջինս օգտուել է նաեւ մի շարք կարեւոր վաւերաթղթերից։

դաք անդր յաշխարհէ մեծին հայոց և պարսից, որք և կոչէին արեւելցիք, և կէսք՝ մանաւանդ թէ յոլովք՝ ի կողմն Եղիազարու, և սոքա էին բնակք ք՝ դքին՝ ժողովեալ անդր ի սահմանաց փոքուն հայոց և հոռոմատանու, և կոչէին հոռոմցիք: Սկսան ապա այս երկու դասք մաքառիլ ընդ միմեանս, և անգոսնել զիրեարս, սոքա զնոսա արեւելցի և յաղորեան կոչելով, և նոքա զսոսա՝ հոռոմցի և եղիազարեան ձայնելով»*)։ Կուռող բանակները փոփոխակի յաջողութեամբ կաշառում էին պետական ազդեցիկ պաշտօնեաներին ու սրանց գրաւելով իրանց կողմը աշխատում էին կայսերական մի հրամանի սահմանածը ջնջել տալ դրան հետևող մի այլ հրամանի զօրութեամբ։ Այս միջոցով 1664—1679 թուականներէ ընթացքում Յակոբ Դ. մի քանի անգամ կարողանում է «վերականգնել» էջմիածնի իրաւունքները, ինչպէս և Եղիազար Այնթապցուն է յաջողութեամբ տաճկահայոց ընդհանրական կաթողիկոսութեան ու Երուսաղէմի պատրիարքութեան համար մի քանի անգամ հաստատութեան թուղթ (պէրաթ) ձեռք բերել։ «Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղև,—այսպէս է գրում Յակոբ Զուղայեցին 1671 թուին Լեհաստանի հայերին ուղղած իր մի կոնդակում,—թէ որքան վիշտ և նեղութիւն յամենայն դիմաց պատեաց զմեզ՝ վասն ի միջոյ բառնալոյ զանկարգութիւն Եղիազարին, և զպարտ վճարելոյ. եօթն տարի է որ ի սուրբ աթոռոյս հեռացեալ՝ աւր ըստ աւրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ելանել, զի մի կաշառօք աւերեսցին զուղղեալն մեր, այլ սիրով շահեսցուք զնոսա»**)։ Կաթողիկոսը շնորհիւ այս բանի ընկնում է ծանր պարտքերի տակ. «ես չը գիտեմ, ասում է Շարդէնը, թէ որքան փող է խակապէս ծախսել կաթողիկոսը այս դժբախտ գործի վրայ, ոմանք այդ ծախսերի գումարը բարձրացնում են մինչև 800,000 լիրա։ Գիտեմ միայն, որ նա 500000 լիրա պարտք ունի վերցրած Պօլսում, որ և ծախսել է իւր գեղեցիկ նպատակի համար»***)։ Մի քանի տարի Թիւրքիայում դեգերելուց յետոյ, ինչպէս վկայում է մի ուրիշ ժամանակակից՝ Լակրուա, Կ. Պօլսի ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղարը, կաթողիկոսը ստանում է վերջապէս խաթիթ շէրիֆ՝ Ղալիելով ընծաներ, «որոնց համար նա ի հաշիւ Նոր-Զուղայի կայսերական մաքսատնից 80,000 դուռուշ (piastres) պարտք է վերցնում»†)։ Այս խնդրի վերաբերմամբ հայկական աղբիւր-

*) Չամչեան անդ, Գ. եր. 700 եւ շար.

**) Ալիշան, «Կամենից» եր. 264.

***) Chardiu, անդ, II, 247.

†) De la Croix. «Etat present des nations et eglises Grecque, Armenienne, et Maronite en Turquie», Paris 1715, եր. 167 եւ շար.

ների տուեալներն էլ են մեծ չափերով տարբերում իրարից . ըստ Զամչեանի կաթողիկոսը պէտք է վճարած լինի թիւրք պաշտօնեաներին 30 քսակ արծաթ (1 քսակը = 500 դահեկան և մօտ 2333 ֆրանս . իրա) *), մինչդեռ ընդհակառակը ժամանակակից մելիքների մի չափազանց ուռցրած վկայութեան համաձայն՝ նրանք կաթողիկոսի պարտքերի համար 2000 քսակ արծաթ են վճարել **): Եթէ հաւատանք Շարդէնին, 1673 թուականին կաթողիկոսը յայտարարած պէտք է լինի պարսից արքունիքին, «որ ինքը ճաշակաստանում 70,000 լիրայից աւել պարք չունի, և որ իւր գլխաւոր պարտատէրերը գտնուում են Պարսկաստանում»։ Կաթողիկոսի մի հակառակորդը զեկուցանում է սակայն, «որ նա սուլթանի հպատակներին 300,000 լիրա է պարտական» ***): Այս յամենայն դէպս խոշոր պարտքերը ստիպում են կաթողիկոսին շրջաբերական գրութիւններով դիմել հանգանակութեան. բայց այս միջոցն էլ դրական հետեանք չի տալիս. Պարսկահայաստանում նրա շրջաբերականներն արձագանք չեն գտնում լայն չափերով. հայ վանականները, գաւառապետներն ու տանուտէրերը՝ ձանձրացած կաթողիկոսի պարբերական ժողովարարութիւններից ու օգտուելով Երեւանի խանի դէպի նա բռնած թշնամական ընթացքից, էջմիածնում իսկ մի առ ժամանակ առաջ են քաշում Ռնուիրիոս վարդապետի հակաթող կաթողիկոսութիւնը †)։

Նեղուած այսպիսի պայմաններից՝ Յակոբ Զուղայեցին չի տատանուում օգնութիւն հայցել կաթողիկ միսսիօնարներից ու նրանց հերոպական հովանաւորներից. յարակից պարագաներում նա մի քանի անգամ դաւանաբանական խնդիրների շուրջն է բանակցութիւններ վարում Հռոմի հետ †*)։ Եւ սակայն բոլոր այս

*) Զամչեան, անդ, Գ. 714.

**) Өзовъ. «Сношенія Петра Великаго съ арм. народомъ». СПб. 1898. док. № 2.

***) Chardin, անդ, IX. 404, Զարարիւս սարկ. Երեւանի խանի մասին մի տեղ յիշում է. «Եւ ինքն ժողովեաց զամենայն փարթամ եւ մեծատուն մարդիկ, եւ էառ ի նոցանկ ՌՅ. Թուման դրամ, (= 58,500 լիրա. Ա. Յ.) եւ պատճառ եղ՝ Թէ աթոռին պարտն տամք, եւ յետոյ ծեղ հւ տուցեն էջմիածնի նստողն»։ Անդ, Բ. եր. 78.

†) Chardin, II, 248, 295 եւ շար. 550 շար. IX, 99 եւ շար. Զարարիւս. անդ, Բ. 76 եւ շար. 85 շար.

†*) Տե՛ս. «Reponse generale au nouvelle livre de M. Claude». Paris 1671, եր. 284 եւ շար. Chardin, III, 146 եւ շար. Bedik «Cehil Sutun» 352 եւ շար. «Israel Ory etc», 43 եւ շար.

փորձերն անցնում են ապարդիւն ու տաճկահայ նուիրակութեան խնդիրը լուծւում է միայն Յակոբ Զուղայեցու մահուանից յետոյ, երբ «Սօղոսն ի Պօղոս փոխեցեալ» ամենայն հայոց կաթողիկոս է ընտրւում նրա գօրեղ հակառակորդը՝ եղիազար Այնթապցին. էջմիածնի իրաւասութիւնը վերականգնեց սրանով իւր իշխանութեան վաղեմի սահմաններում*):

Յակոբ Դ. Զուղայեցու մի շրջաբերականի մնացորդները.

Ստորև ղետեղուած հատուածներն ընդօրինակւում ենք էջմ. Մատենադարանի № 2693 գրչագրի կազմին կպցրած պահպանակներին**). Ամբողջ գրութիւնը ամփոփուած է եղել երկար փաթեթի մի երեսի վրայ, որ յետոյ, գործադրուելով որպէս պահպանակ, պէտք է կտոր կտոր արուէր: Մկրատն անհետացել է այսպիսով գրութեան սկզբի և միջին տողերից մի քանիսը, իսկ վերջից՝ ստորագրութիւնը: Տեղ տեղ կտրտուած են նաև հատուածների ծայրերը, կամ թէ տողերն ընդհատուած են շնորհիւ կազմի վրայ ամրացրած մեխերի, որոնցով պահուած են գրչագրի փականները: Սակայն հարեանցի իսկ ծանօթանալով ընթեռնելի տողերի հետ, դժուար չէ համոզուել, որ գործ ունենք Յակոբ Դ. Զուղայեցու 1667 թ. մարտի 22-ին Կ. Պօլսում գրած մի շրջաբերական կոնդակի հետ: Հատուածների մէջ կարելի է գտնել մի քանի մանրամասնութիւններ նուիրակութեան խնդրի շուրջը: Վերջում պարտապաններից նեղուած կաթողիկոսը բացայայտում է երկար գրութեան կարճ իմաստը՝ «լիալիր և ա՞ծատուր ողորմութիւն խնդրեմ ա՞մ իրաց և յայտնապէս. զտասանորդն պահանջեմ ի ձէնջ»:

«... գալ առ ինքն աղաղակ, յայնժամ հրամայեաց թ՞գրն փութանակի տանել զմեզ առ զայմաղամ փաշան. առ ի հասու լինել զմեր ռ՞պուլթ՞ե հասաս . . . ինձ թալհիս անէ հրամայեաց ոտէպ ոտէպ. Յայնժամ առևալ տարան զմեզ առ զայմաղամ փաշան և մինչ գնայեաք ի ճանապարհին, մի ի ծառայից ե(կն)ա(ռ) մեզ փութացուցանելով ի հրամանէ թգրին. և յորժամ հասաք մեք առ զայմաղամն և մինչդեռ խօսէաք ընդ նմա. եկն նախ. երկ՞րդ երրորդ չորրորդումն անգամ ի վ՛ր միմիանց մարդ առաքեաց առ ի ստէպ փութացուցանել և երազ երազ հասանել ի վ՛ր իրին և թալհիս անել. իսկ յորժամ . . . ան թալհիսն առ թ՞գրն.

*) «Զամբու» եր. 259.

**) Կրչագիր Ներսէս եպ. Տարսուացու «Մեկնութիւն Սաղմոսաց», մեծադիր, Թուղթ, բոլորազիր, տեղն ու ժամանակն անյայտ. հաւանօրէն Ժէ—ԺԸ դարերի զործ:

Յայնժամ իսկապէս վերահասու եղաւ զմե...ան օտար երկրէ գալն
 և այնքան քնաս և զլու...ն մեզ, և այն ժ^հռ (ըստ)կ պէտիաթ
 միրի լինել որ ոչ է եղեալ յերբէք ըստ իւ^րնց թագաւորութե
 ժամանակն. և ոչ գտաւ ի տիւանն և ոչ ի տէֆտէրխանան, Յայն-
 (ժամ ո)ղորմեցաւ և քաղցրացաւ թ^հգրն ի վ^ր մեր ըստ
 խնամոցն ա^յ, և բարձեալ միրի կապեալ ժ^հռ ըստակ պէտիաթն.
 և ետ հէթտիշէրիֆ պինտ և հ(աս)ատուն իւր բարձր հրամա-
 նաւն, և ոչ լինել պահանջել բնաւին իսկ, և ինք իւր բարձր իշ-
 խանութեմն երեգ տեղիս գծագրեաց ի մէջ հէթտի շէրիֆ... այն
 պէտիաթ, ժ^հռ, ըստակ միրին բարձի և ըռէֆտ արարի. և ո^ւպ
 եղեալ է յառաջմէ նոյնպէս հաստատ մնայ. եւ արդ ով սիրելի
 որդիք իմ զի...ն շնորհ և բարերարութ^ի յ^այ է և ոչ ի մարդկանէ,
 ո^ւպ ասէ սողոմոն սիրտք թ^հգրաց ի ձեռն ա^յ են, այոյ և տեսաք
 այժմ ստուգապէս. բայց զայս խնդրեմ ի ձ(եզ ո)վ սիրելիք մի-
 արան ա^ւմքն ի ձեռս վեր կալուցէք առ ա^ւծ, և ասացէք ա^ւծ
 թ^հգրն անփորձ և անսասան պահեսցէ, յերկար կեանք և ժամա-
 նակ պարգևեսցէ, միշ(ե եւ յ)անապաղ ուրախութ^ւբ և ցնծութ^ւբ
 պահեսցէ ամէն. Ապա ով սիրելիք եթէ այն պէտիաթն որ մնացեալ
 էր ի վ^ր ս^ր բթոռոյն Եղ^մյ. զինչ լինելոց էր հալ և ճարն ս^ր(բոյ
 Եր)ուսաղէմայ. ի ձեռս անիրաւ սևագլխաց հայոց, որ զս^ր մե-
 ոռնն և զս^ր լուսարուխ գերեզմանն, ի վ^ր միմիանց եղեալ միրի
 էին կապեալ. ժ^հռ, ըստակ, յետ... ինչ տարու. ճ^ւ անգամ, ճ^ւ
 ըստակ լինելոց էր, որ ամէն տարեց տարի առաջնորդն փոփոխէր
 և զմիրին աւելնոյր օրըստօրէ յափշտակելով ի ձեռաց միմեանց,
 չա(ր եւ ան)իրաւ սևագլուխքն հայոց և բարթէր պարտն ի վ^ր
 պարտուց. և լինէր ս^ր աթոռն յե^րզմ գերի և ծառայ, ի ձեռս
 պարտատիրաց. և յետ ն^ր յայտնի է թէ զինչ լի(նիլո)ց էր զայն
 աթոռն յե^րզմ, և յայն ժամ յետին վայն և զթշուառութ^ի պատէր
 ազգս հայոց. եւ արդ ով որ, բ^ւ. ս^ր աթոռքն ս^ր ե^րզմ և ս^ր էջ-
 միածին ի միմիանց բա(ժանե) բաժանեսցի ինքն ի շնորհացն ա^յ.
 զի որ աւերումն կամեսցի աւերեսցի իւր բաժին արքայութ^ի. և
 տուն ն^ր աւերակ դարձցի. իսկ որ քակումն կամեսցի, քակ(.....)
 ոսկլն ի մարմնոյն և մարմինն ի յոսկերացն. և որ պակասութ^ի
 կամեսցի պակասեսցի աչքն ի լուսոյ և կեանքն ի կենաց, և ոչ
 կարիցէ տեսանել զճշմարիտ լոյս(ն)^ւս յաւուրն դատաստանի:

Եւ արդ ով սիրելիք իմ և ա^ւհեալ ժողովուրդք յա^ւ. ահա
 և ձեզ զհկուցաւ ծայրաքաղ և համառօտաբար զմինն ի բազմացն.
 Ահա այժմ ձեր աչքն ի լոյս և ձեր ոսկանջն աւետիս որ այն ս^ր
 աթոռն յե^րզմ, ազատեցաւ ի հարկէ և ի նոր պէտիաթէ: ողոր-
 մութ^ւբ և շնորհօքն ա^յ, և եղև ազատ կեալ ո^ւպ էր ցառաջն: Արդ
 ով սիրելիք զայս գոեւս մի որ ի պարծանս մեր կարծեսցէ որ

խօսիմս, այլ ի շնորհաց քի ծանիցէ. ո՞ւր գրէ առաքեալն պօղոս թէ տ՛ր է... յաջողէ զգործս կամենն և առնենն. Յայտ լիցի սիրելի որդւոցս ի գալն մեր այս երկիրս յաղագս այս գործոյս. երբեմն ես ինքնին տրտնջէի, երբեմն մերայինքն և (եք)բեմն օտարքն. այլ և այլ մտածէաք իբրև ոչ յաջող և անպատշաճ գալն ոչ էր ըստ մեր տկար կարծեացն.. Այլ ի խնամոցն ա՛յ էր որ յա՛մ անե-րևոյթէ և . . . ևս գործեալ առաջի իւր պարզապէս փայլէ. Աստ երևեցաւ յայտնապէս շնորհն յա՛յ, որ ի գալն մեր և ի ժամա-նենն աստ առաջնորդութենէ և ի տնտավութ՝ (հ՛ո)գոյն սրբոյ երևեցաւ, և այժմ իմացաք հաւաստի և ստուգապէս. եթէ իմ ոչ էր եկեալ աստ. զայն անշիջանելի հուրն ոչ շիջանէր, և զանբուժելի ցաւն ոչ փարա(ս)էր, ո՞ւր յայտնի իսկ է գիտողաց, որ անհնարին է յումեք մի իր ինչ կապեալ միւրի բանին. բառնալ բնաւին կամ վերցնել. մինչև ի մի ըստալն և իբնիոնն, բայց ի թ՛գի...ր միայն հրամանն ն՛ր է, և նա միայն է կարող և հրամա-յող, բառնալոյ և շնորհելոյ, ո՞ւր արար մեզ քաղցրութ՛ք և ողոր-մութ՛քն ա՛յ, վ՛ս զի նա միայն է տ՛ր և թ՛գր ա՛մի. այլ (ո)ք ոչ չունի (sic!) հրաման այս գործ առնելոյ՝ բայց միայն ի թ՛գրէն. և այս մեր բանն և գործն երկու կերպիւ եղև. նախ որ պետիաթ էր. և ոչ ի սկզբանէ եղած էր. երկրորդ որ նոր էր և ոչ անցեալ ժամանակ ինչ ի միջոց զոր չարն տնկեաց և սահմանեաց ըստ իւր չար բարուցն. և ըստ իւր չար խորհրդոցն տ՛ր ա՛ծ լիցի վրէժխնդ

. ջ ևս էր մեծ խղճմտանք և տարտ, որ ի ձեր ժամանա-կէն մնայր չարեաց սերմն. փառք և գոհութիւն ա՛յ, ձեր ական-ջօքն լուաք և ձեր բարի աշօքն տեսաք. ազատ(ութիւն) յերկո-ցունց ս՛ք աթոռոցն, ո՞ւր որ յառաջն էր. նոյնպէս և մեզ եղև ազատութի՛ խղճմտանաց: Որովհետև տ՛ր գթացաւ և քաղցրա-ցոյց զսիրտ թ՛գրին, որ (ե)բարձ զմիւրին և զգիրն ջնջեաց. Այ-սուհետև թէ մեռանիմ դուք ողջ և առողջ կենայք: Դ՛րձ հոգևոր որդիք իմ զձեր բնական սէրն զոր ի նախնեաց հետէ ունիք (ա)ռ երկու ս՛ք աթոռոցն պարտիք հաստատուն և անխզելի պահել. ոչ թէ վ՛ս մարդոյ էք սիրող. այլ ս՛ք աթոռոցն վ՛ս հաստատութե՛ հաւատոյս և հոգւոց փրկութի՛ ձերոյ. իսկ որք... (սպաս)աւորք և առաջնորդ լինին ս՛ք աթոռոցն ըստ իւր(աշանչ)իւր գործոյն առնելոց են արդարադատէ յ՛այ իսկ դ(ուք պա)րտիք հանապազ ար(ծ)արծել զձեր սէրն. զինչ պաշտօն և պտ՛րգ մատչի ի ս՛ք աթոռան ձեզ և ձեր ննջեցելոցն մասն և բաժին լիցի ամէն: Այլ և ցանկալիք իմ և ըղձալի(ք) հոգւոյ իմոյ, և ա՛հնեալ (զա)րմ և զաւակ ս՛ք մօրն լուսոյ. զի գրէ երեգտասան առաքեալն պօղոս ասելով անա՛ օր փրկութի՛ անա՛ ժամանակ ընդունելի. մի և մի

իւիք տայցէք զպատճառն.. մի արատեսցի պաշտօնն. և արդ ի նոյն գրեւոյն միշտ ընդ ձեզ տեսանի անցումն կենաց մերոց յարակայ. և այժմ հրաւիրէ մեզ առ ի նկրտումն անանցին անճառելոյն (ո)՝ պճառէ նոյն ինքն զմայլմամբն ասելովն, զոր ական ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. զայն պատրաստեաց սիրելեաց իւրոց որ յոյժ ցանկալի և կարի փա(փ)աքելի տեսանի. ահա և այժմ յայտնեցաւ ձեզ. ա՛մ իր և բան մեր. զոր կարճ ի կարճոյ և համառօտաբար զեկուցմամբ ծանուցաք ձեզ հազարն և բիւրն միով իւիւ, ահա (ա)յս, բ՛ տարի է որ այս ա՛ծասաստ բարկութի՛ւն էջ ի վ՛ր տանս հայոց. զի թէ որքան տազնապ վիշտ և նեղութի՛ւն կրեցաք մեք մերայնովք միայն ա՛յ է գիտելի. և թէ որքան փող (եւ) դրամ վատնեցաւ և դրուեցաւ աստ և անդ, զի ոչ կա թիւ և ոչ չափ, ո՛ւ պ յայտնի է ձեզ այսպիսի իր ի դուռս արքունեաց. այսքան ծախս ծախեցաւ. հազիւ (ն)ազիւ գերծեալ ազատեցաք զայն բ՛ ս՛բ աթոռն ի գերութենէ և ի ծառայութենէ. ո՛ւ պ գրեցաք ի վերոյ. վ՛ս որոյ գոչէ առաքեալն ի սմին ժամու այսու իրաց. ահա օր (բա)րկութեան, և օր ազատութե՛. զի ով որ այսօր որ ձեռնտու և յօժանդակ լինի ըստ յայսմ գործոյ ըստ իւրաքանչիւր չափու, այ...ն նմանէ կոստանդինոսի և տ՛ր ...ա տայ ս՛բ թ՛գրաց. ո՛ւ պ ն՛ք որ նորափոր հիմամբ հիմնարկեալ շինեցին, և այժմ դուք հանգոյն ն՛ց, նորա կերտութ՛ր կառուցա(նեմ ս՛բ) աթոռքն. և ս՛բ զօրաբարէլին ... (զ)աւերն տաճարին և զբակումն նորին կրկնակի շինեալ. նորոգեցաւ յայժմ և դուք ըստ նմին քառակի նոր ն(որո)գեալ կառուցանէք, յիշատակ ձեր (եւ) ձեր ննջեցելոցն. եւ արդ սիրելիք իմ ի մ՛ր, և ես նոթեանս (?) յայտնապէս աղերսելով բողոքեմ առ ձեզ. և իսկապէս զեկուցանեմ որ և ես ի ձէնջ յայժմոյս լիալիր և (ա՛ծ)ատուր ողորմութի՛ւն խնդրեմ ա՛մ իրաց և յայտնապէս. զտասանորդն պահանջեմ ի ձէնջ. որ մինչ ի յուստերաց և դատերաց որ ըմբուն և պատշաճ վարկանեմ .. նչ ցայս վ՛ս ազատութե՛ ս՛բ աթոռոցն. զի ա՛մէ հարկիւ և պաղատանօք լի և կատարեալ ողորմութի՛ւն խնդրեմ. ըստ ա՛մի չափու մինչ ի այրիս և ի որբս ժտեմ. զի և ն՛ք (մա)սն և բաժին ընկալցի (sic!) ի նոյն շնորհաց և ի պարգեաց ո՛ւ պ ի վերոյ ճառեցաւ. եւ աստ ոչ առ ի մեծատուն և աղքատ. կոմ որբ և այրի. քանզի ամենեքեանքս (պ)արտական եմք հոգով և մարմնով այն բ՛ ս՛բ տանն: Իսկ թէ որքան ուխտ և խոստմունք ունիք թէ հոգւոյ և թէ մարմնոյ այսու ամանակի (sic!) ամէնն շնորհեցէք այն ...անց որ կարի հարկաւոր և պատշաճաւոր ժամանակի եթէ քառասնից և ժամուց մատաղի և ընծայ և վ՛ս կենդանեաց և ննջեցելոց խոստմունք զոր (իս)ոստացեալ ունիք ի սէրն ա՛յ, խնդրեմ զամենն շնորհել

ողորմութիւն՝ սէր և թողութիւն թերեւ լինի ազատութիւն և թեթևութիւն՝ ինչ այնքան պարտուցն։ Այլ և զայս (պ)ատուիրելով պատուիրեմ ձեզ սիրելեացդ իմոց. զի յորժամ տաք և նուիրէք զձեր տուրք և ողորմութիւն՝ զամենն ի գիր և տէֆտէրս առջիք ամենեքեանդ թէ շատ և թէ սակաւ թէ որքան և իցէ մինչև զկէս ըսուպն և ի մի ըստակն զամենն տէֆտէր արարէք թէ քաղաք և թէ գիւղ, և թէ այլ ինչ տեղիք որ լինի զի իւրաքանչիւր (ս)եղևոյ տէֆտէր արասցէ երեգ մինն առ մեզ առաքեցէք մինն ընդ ձեզ պահեցէք, և միւսն տացէք յայնմ որ զողորմութիւն ժողովէ. և ամեն ոք որ ողորմութիւն շնորհեն ըստ չափոյ իւրնց գրեսցեն և զանուն իւրնց. և ծնողացն և զտեղոյն և զքաղաքին. որով կոնդակաւ դրոշմեալ արձանասցի մնալով յճշտի յճշտն ի մէջ այն բն. սէր տանն որ հնազանդ ի մէջ պտուղի և ի մէջ պաշտման յճշտի. որ մասն և բաժին լինի կենդանեաց և հանգուցելոց. և զձեզ առ հասարակ ամենեքեանդ արժանաւորս արասցէ երանաւէտ ձայնին որ ասէ եկաք ահա հեալք հօր իմոյ ժառանգեցէք զանրսպառ ուրախութիւն որ է ահա հեալ յճշտն ամենն։ Գրեցաւ ահա թե ինչն ամենն իմին ՌժԺ և վեց, մարտի ամսոյ, իւր ի մայրաքաղաքն կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ սէր լուսաւորիչ եկեղեցւոյ»։

Ա. Յովհաննէսեան.



Արմաւիրի չեքեզախօս հայերի անցեալի մասին — հայրենիք եւ զաղթը։

Ա.

Արմաւիրի չեքեզախօս հայերի մասին ռուսաց արխիւների և պարբերականների մէջ տպուած տեղեկութիւնները ժ.թ. զարից են, իսկ աւելի հին շրջանից համարեա ոչինչ յայտնի չէ։ Այն հարցը, թէ ինչպէս են նրանք լեռներն ընկել կամ նախ քան իրենց Արմաւիրում վերաբնակուելը ո՞ր էին նրանք բնակուած, մնում է անլուծելի. «Այս առաւել, այն քեօյի մէջ էին ցրուած, տուն-տուն բաժանուած չեքեզներ, բալկարներ, ուրուսերեցոց մէջ», այսպէս է աւանդութիւնը այդ մութ շրջանի մասին։ Եւ վաղուց մոռացուած է այն, ինչ որ Հակոտհառնէնը յիշում է լեռնաբնակ հայերի՝ իբրեւ խմբուած մի հաստատաբնակ մասսայի մասին, թէ Պիցուդայից դէպի հիւսիս լեռների մէջ գտնուում է մի հայոց եկեղեցի և վանք, ուր ափխազներն էլ են ուխտ կատարում. վանքը գրադարան ևս ունէր 1840 թվական թուերին (Закавказскій Край, 1858, Москва, I. 5)։